№ 36. Սեպտեմբերի 14 — 1872 — Սեպտեմբերի 14. № 36.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ՝

Տարեկան գինն է 7 ռուբլի (փոստի ծախսով)։ Օտարաքաղաքացի բաժանորդները պիտի դիմեն այս հասցեով. Въ Тифлисъ. Въ Редакцію Армянской Газеты „Мшакъ“.

Թիֆլիսում կարելի է ստորագրվիլ խմբագրատան մէջ (սրծրու Նուռ տուն) և եվանովի ընթերցարանումը։

ՄՇԱԿ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝

Մասնաւոր յայտարարութիւն տալել տուողը պիտի վճարէ 10 հասարակ տառի համար 1 կոպէկ արծաթ։ Յայտարարութիւնները ստացվումեն Հայերէն, Ռուսերէն, Վրացերէն, Ֆրանսերէն, Գերմաներէն և Թուրքերէն։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ձեր պարտաւորութիւններ։—Ներքին տեսութիւն։ Ընտրութիւններ։ Թիֆլիսի ջրանցքի խնդիր։ Մի անհրաժեշտ առարկայ։ Նամակ Նորբայազէդից։ Նամակ Ագուլիսից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Նամակ Դաւրէժից։ Նամակ Դրէզդէնից։ „Մանզումէի“ լրագրից։ Արտաքին լուրեր։—Խառն լուրեր։—Առևտրական։—Յայտարարութիւններ։

ՁԵՐ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կիրակի օրը ամիս 10-ին պատգամաւորները հաւաքուեցան Ներսիսեան դպրոցի դահլիճում որ հոգաբարձուներին ընտրեն Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի համար։

Ընտրողութեան ձևը քուէարկութիւնն է։ Ամէն մէկը ուրեմն քուէ գցելով մէկ որ և իցէ անձի համար, զուցէ իր պարտաւորութիւնը կատարած կը համարէր, չը յիշելով թէ ամէն մէկի գցած քուէն ինչքան նշանակութիւն ունէ ապագայի համար և խեղճ հայութեան սերունդի համար։

Այդ հայութիւնը պիտի բաժանենք երկու մասը, որ կարողանանք ցոյց տալ այն բոլոր սխալը և ծանր պարտաւորութիւնը որը դրել է պատգամաւորների վերայ այդ խօսքի (հայութեան) նշանակութիւնը։

Հայութիւնը բաժանվում է, ինչպէս ամէն տեղ, նմանապէս և Ռուսաստանում երկու մասը, նաև Թիֆլիզում։

Մէկ մասը հարուստ ազնուական կամ վաճառական մասն է, միւսը արուեստական, մշակ և թափառական կամ աղքատ մասը։

Առաջին մասը յիշել անդամ չի կամենայ թէ կայ աշխարհիս երեսին Ներսիսեան ազգային հոգևոր դպրոց, որովհետև նա ճանաչում է գիտէ շատ պանսիոններ, գիմնազիոններ և համալսարաններ, որտեղ կ'ուղարկէ կրթելու իւր որդիքը, իսկ միւս մասը,—հայութեան աղքատ մասը,—միայն մէկ միջոց ունէ կրթելու իւր որդիքներին, նա կը թում է նոցա Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի պէս ուսումնարաններում։

Այդ դպրոցը հոգևորական դպրոց է և դորա նշանակութիւնն է պատրաստել հայութեան համար կրթուած հոգևորականներ։ Վսեմ և հիանալի միտք։ Բայց մենք տեսնում ենք որ այդ նպատակը շատ քիչ է իրագործվում։

Գուցէ 10 կամ 12 ուսում աւարտուած երիտասարդներից հազիւ թէ 4 կամ հինգը նուիրում են իրանց հոգևորականութեան։ Մեր կարծիքով այդպիսի հետևանքը շատ բնական է։

Մեր ազգային պատմութիւնից մեզ յայտնի է որ հոգևորականութիւնը մեր մէջ երբէք մէկ առանձին կաստանման դաս չէ կազմել, ինչպէս ուրիշ ազգերում։ Իսկ հոգևորական կարգը հայը ընդունել է միշտ ըստ կոչման հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ։

Այդ պատճառով ամէն ունեցած ազգային ուսումնարաններում միշտ կրթուել են առհասարակ հայ մանկունք, որոնցից թէ հոգևորական և թէ աշխարհական են դուրս եկել։

Ուրեմն, մեր Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցից կարող են դուրս գալ և քահանաներ և աշխարհականներ։ Թող ուսումնարանը լինի հոգևորական և աշխատէ պատրաստել կրթուած հոգևորականներ, բայց մի և նոյն ժամանակ պիտի հոգալ որ միւսները, որոնք չեն կարող հոգևորականութեան նուիրել իրանց, դուրս գալով ուսումնարանից չը թափառեն անկիւնից անկիւն, անհաց, անտուն, անգործ և անընդունակ գործունէութեան։ Դա մահու և կեանքի հարց է։ Ահա այս վերջին հետևանքը աչքի տակ ունենալով, մենք կարծում ենք որ եթէ դընենք ձեռներս մեր սրտի վերայ, մենք պիտի խոստովանենք, որ մեծ և ծանր պարտաւորութիւն էր դրած մեր պատգամաւորների վերայ։ Մենք պիտի ընտրէինք 12 անձինք, բարեխիղճ և ազնիւ անձինք։ Բարեխղճութիւնը և ազնուութիւնը շատ քիչ կը լինի եթէ մեր ընտրած բարեխիղճ և ազնիւ մարդիքը չեն իմանայ թէ ինչ պիտի գործեն։

Ահա ինչ պատճառով մենք աշխատեցինք ցոյց տալ Ներսիսեան ազգային հոգևոր դըպրոցի նշանակութիւնը հայութեան համար, և այն ուղղութիւնը որ ունեցել է և պիտի ունենայ այդ ուսումնարանը։

Այդ ուսումնարանը մտնում են խեղճ հայի խեղճ զաւակները. նոքա մտնում են այն յոյսով, որ ուսում առնելուց յետոյ, կարողանան մէկ կտոր հացի ճանապարհ գտնեն, որ այն կտոր հացով պահեն իրանց և իրանց ծնողներին, իսկ մենք մինչի այսօր միշտ հակառակ հետևանքն ենք տեսել։

Անհամար երիտասարդներ, ուսումն աւարտած այդ դպրոցում թափառումեն քաղաքից քաղաք, սոված, տկլոր, չիմանալով մէկ ինչ և իցէ ազնիւ ճանապարհ հացի։

Յոյս ունինք որ պատգամաւորները ընտրեցին այնպիսի հոգաբարձուներին, որոնք բարեխիղճ և ազնիւ լինելով, աչքի տակ կունենան մի և նոյն ժամանակ և մեր բերած հետևանքները, որ կարողանան անցեալի պակասութիւնները լրացնել։ Թող քահանայ ցանկացողը քահանայ դառնայ, բայց և աշխարհական մնացողը գոնէ կարօտ չը մնայ կտոր հացի։

Գ. Զ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սեպտեմբերի 10-ին հաւաքվեցան առաջնորդարանում Թիֆլիսի բոլոր եկեղեցիներից ընտրված պատգամաւորները։ Ներսի Սրբազնութիւնը մի քանի խօսք ասաց որտեղ զգուշացրեց պատգամաւորներին սիրով համեստութեամբ և քաղաքավարութեամբ վարվել այդպիսի նշանաւոր գործում, ինչպէս է մեր ազգային հոգևոր ուսումնարանի համար նոր հոգաբարձուների ընտրութիւնը։

Որանից յետոյ հին հոգաբարձուներից մինը, պ. Գրիգոր Իզմիրեանց կարճ կերպով ձևակերպեց պատգամաւորների առջև ուսումնարանի անցեալի աննախանձելի պատկերը և հաշիւ տուեց նորա ներկայ դրութեան վերա։ Նորա խօսքերից երևումէ որ նիւթական կողմից ուսումնարանը առաւել յաջող պայմանների մէջ է գտնվում քան ուսումնականից։ Ներկայ հոգաբարձուները, ինչպէս տեսնումենք պ. Իզմիրեանցի խօսքերից, կարգի գցեցին ուսումնարանի գանձարանը, կապալաւ տուին ուսումնարանին պատկան զանազան խանութները և արդիւնք բերող մուլքերը, նորոգեցին հին Ներսիսեան շինութիւնը, որ վաղուց աւերակ էր թողած, վարձով թուին վերի յարկը մի հաստատ և ապահով հիմնարկութեանը (երաժշտական ընկերութեան) ածեցրին ուսումնարանի եկամուտը մինչև 24 հազար ռուբլի։

Պ. հոգաբարձուի խօսքերից երևումէր որ ներկայ հոգաբարձութիւնը արել էր այն, ինչ որ նորանից կախված էր ուսումնարանի տնտեսական կողմից։ Նոր հոգաբարձութեանը մնում է միայն հոգալ ուսումնական մասին։ Որան պատասխանեց Սրբազանը, ասելով որ թէև ներկայ հոգաբարձութիւնը ածեցրեց ուսումնարանի եկամուտը բայց մի և նոյն ժամանակ և թողեց ուսումնարանի վերա մինչև 13,000 ռուբլի պարտք որ չը կար հին հոգաբարձութեան ժամանակ։

Թողնելով առաջնորդարանը պատգամաւորները ուղևորվեցան դէպի Ներսիսեան դպրոցի դահլիճը, որտեղ Սրբազանի նախագահութեամբ սկսեցին ընտրութիւնները։

Ընտրութիւնները շարունակվում էին երեք օր, կիրակի, երկուշաբթի և երեքշաբթի օրը։

Սեպտեմբերի 12-ին վերջացան ընտրութիւնները։ Ձայների բազմութեամբ ընտրվեցան 12 հոգաբարձու և 4 կանդիդատ, որք և պիտի առաջարկվին Նորին Վեհափառութեան հաստատելու համար։

Ահա ընտրված հոգաբարձուների անունները.

Տէր Ղևոնդ քահանայ Խարազեանց
Տէր Մուշեղ քահանայ Տէր-Ղևոնդեան
Աստիճանաւոր Գէորգ Աքիմեանց
Աստիճանաւոր Յովհաննէս Ամիրաղեանց
Աստիճանաւոր Անտոն Ղորղանեանց
Աստիճանաւոր Գաբրիէլ Սունդուկեանց
Աստիճանաւոր Գրիգոր Իզմիրեանց
Բժշկապետ Գրիգոր Քուչարեանց
Դոկտոր Գրիգոր Արծրունի
Պատուաւոր քաղաքացի Յովհաննէս Զիլթախեանց
Աստիճանաւ. Յովհաննէս Խատիսեանց
Աստիճանաւոր Իսահակ Պօպով

Կանդիդատներ։

Ռուբէն Զալալեանց
Բժշկապետ Ռօտինեանց
Գուստաֆ Քալանթարեանց
Աստիճանաւոր Խանդամեանց

Երբ ընտրութիւնները վերջացած էին Սրբազան Մակար արքեպիսկոպոսը դիմելով պատգամաւորներին, յայտնեց նրանց իր շնորհակալութիւնը, որ նոքա օգնեցին նրան ընտրութեան գործը մինչև վերջը համաձայնութեամբ և խաղաղութեամբ տանելու ցոյց տալով մի և նոյն ժամանակ իրանց եռանդը ազգային գործի վերաբերութեամբ։

Նորին Սրբազնութենից շնորհակալութիւնը և օրհնութիւնը ընդունելուց յետոյ, պատգամաւորները միմեանցից բաժանվեցան երեք օրվայ ծանր աշխատանքից յետոյ։

ԹԻՖԼԻՍԻ ՋՐԱՆՑՔԻ ԽՆԴԻՐԸ

Մեզ յատուկ է առհասարակ, կամ ոչինչ չը շինել, կամ եթէ մի բան սկսենք,—անպատճառ ամենաընդարձակ ձևով, ինչպէս Ֆրանսիացիները ասումեն en grand...

Եօթանասուն հազար բնակիչների քաղաքը ամենաողորմելի գրութեան մէջն է ջրի կողմից։ Ջուրը ինչպէս յայտնի է, բերվում է Թիֆլիս Կուր գետի ցած տեղերից, որտեղ նա իր մէջ պարունակում է շատ և շատ ինչասակար օրգանական մասերը, գոյացած քաղաքի անմաքրութիւններից, որք ընկնում են ջրի մէջ Կուր գետի երկու ափերի երկայնութեամբ։

Իսկ թուլուխներով ջուր բերելը գետի վերի մասերից շատ դժուար է։

Քանի մի տարի սորանից առաջ անասելի դժուարութիւններ յարթելով, մանաւանդ նիւթական կողմից, մի հայ, գեներալ Ղորղանեանը Կուրի վերի տեղերում, ուր որ ըսկրսվում է քաղաքը (Թիֆլիսի հիւսիսային կողմը) շինել է մի շոգեմեքենայ, որ բարձրացնում է ջուրը, մաքրում է նորան և ստորերկրեայ խողովակներով բերում է քաղաքը։

Քաղաքացիներից կախված էր այդ արդէն բանող մեքենայից օգուտ քաղել, կազմել մի ընկերութիւն, պ. Ղորղանեանցին հրաւիրել մասնակցել իրանց ընկերութեան մէջ և որովհետև նա մոխել է արդէն ահագին փողերը, դործ է դրել իր բոլոր ջանքերը այդ մեքենայ իրագործելու համար, պատրաստ ունէ բոլոր գործիքները,—բայց որովհետև այդ տեսակ ձեռնարկութիւնը մի մասնաւոր մարդի ոյժերից վեր է և կարող է աջողվել միայն ընկերակցութեան միջոցով,—քաղաքացիներից կախված էր, ասումենք, օգուտ քաղելով պ. Ղորղանեանցից արդէն գլուխ բերած ձեռնարկութենից, ընկերանալ նորա հետ և համարել նորան ընկերութեան քանի մի ակցիաների բաժանորդ։

Բայց այնուամենայնիւ մենք տեսնումենք, որ բացի երկու երեք մարդկերանցից, մաս-

նաւոր դաւիթներում և տներում ոչ ոք չէ մտածել այդ ջրից օգուտ քաղել, որ անցնում է արդէն ամենալաւ փողոցներով, իսկ օգուտ են քաղել մինչև հիմի միայն արքունի հիմնարկութիւնները, ինչպէս հրապարակաին Ալէքսանդրեան այգին, Օկրուժնոյ Սուղը և այլն...

Պ. Ղորղանեանցի շոգեմեքենան բարձրացնում է այս բոպէիս մինչև 50,000 վէդրօ օրը և եթէ աւելի չէ բարձրացնում, այդ այն պատճառով է որ ոչ ոք չէ կամենում նորան նիւթական միջոց ներկայացնել ջրի աւելի մեծ քանակութիւնը բարձրացնելու: Եթէ միջոց լինէր, եթէ ընկերանային բաժանորդները այդ ձեռնարկութեան հետ, մենք կարծում ենք որ պ. Ղորղանեանցին դժուար չէր լինի հասցնել ջրի քանակութիւնը մինչև 300,000 վէդրօ:

Իսկ այդ ժամանակ, արդէն դլուխ բերած գործը անուշադիր թողած, մենք հետևում ենք երևակայական ձեռնարկութիւններին. Արագուայից մինչև Թիֆլիս ջրանցք շինելը, գազի լուսաւորութիւն մտցնելը և այլն այդ տեսակ ցնորքներին...

Մենք կարծում ենք որ առանց գազի լուսաւորութեան մենք կարող ենք առ ժամանակ շարունակել մեր ասիական, նահապետական գոյութիւնը, այն ինչ ջրի հարկաւորութիւնը քանի գնում է աւելի ու աւելի իրան զգալ է տալիս:

Մենք չենք վախենում ասել թէ գազը շռայլութիւն է, այն ինչ ջուրը առողջապահական, տնտեսական և բարոյական առաջին և անհրաժեշտ հարկաւորութիւն է:

Մենք կարող էինք ցոյց տալ քանի մի փողոցները Թիֆլիսի մէջ, որտեղ պ. Ղորղանեանցի խողովակները արդէն դրած են և մէկ կամ երկու մասնաւոր տները օգուտ են քաղում ջրից, իսկ մնացած տանտէրերը փողոցի երկու կողմը, լաւ գիտենալով, որ հարկաւորէ միայն ձեռք մեկնել ջրին հասնելու համար, խնայում են քանի մի հարիւր ռուբլի, իրանց գաւիթը գլխաւոր խողովակից ճիւղեր անցկացնելու:

Ինչպէս տեսնում ենք Թիֆլիսի մէջ ջրանցքի խնդիրը գործնական կերպով արդէն վճռած է պ. Ղորղանեանցից. իսկ այդ ժամանակ փոխանակ Նորա հետ միանալու, մենք կազմում ենք մասնաժողովները, ունենում ենք նստերը, գրում ենք սմետաները և մշակում ենք ամենաբաղդրեալ նախագծերը:

Ինչպէս և պէտք էր սպասել պ. Ղորղանեանցին, որ արդէն շինում է գործ, այն ինչ մենք խօսում ենք միայն, չեն էլ մտածում հրաւիրել մասնաժողովների նստերին, որտեղ նա ոչ թէ լոկ տէօրիայի և երևակայական, ձեռնարկութիւնների և եղիպտական շինութիւնների նախագիծներ կը ներկայացնէ, այլ կը բերէ իր հետ դրական փաստերը, քանի մի տարուայ փորձը և այդ հասարակ և մխիթարական խօսքը, որ հետևանք է անխոնջ աշխատանքի.—ես շինեցի:

ՄԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՌԱՐԿԱՅ

Ա.

Ընթերցող, եթէ մի մարդ չէ տեսնում իւր շրջակայքի մէջ այն, ինչ որ տեսնում են միւսները, ի՞նչ կասես դու նորան:

Անկասկած „կոյր" անունով կնքելու ես նրանց: Բայց մեզանում կայ մի մեծ բազմութիւն մարդկանց, որոնք իւրեանց շրջապատող բնութեան մէջ չեն տեսնում այն հասարակ բաները, որոնք պայծառ տեսանելի և հասկանալի են միւսների համար: Միւս կողմից տեսնում ես, որ ոմանք արիւն քրտինք թափելով հազիւ են ճարում իւրեանց օրական ապրուստը, իսկ միւսները բնութեան ուժերը գործ դնելով իւրեանց տեղ հանգիստ վայելում են նոցա արդիւնքը: Այս և սորա նման ահագին խտրութիւններ անողը զարգացումն է, որ մինի աչքերը բաց է անում և պարգևում է հանգիստ կեանք, իսկ միւսին դատապարտում է մինչև մահը կոյր լինել և վարել նեղութիւններով ծանրաբեռնած կեանք:

Բ.

Բայց որտեղ է սաացվում այդ զարգացումը: Սկզբնական զարդացման կանոնաւոր ընթացքը լինում է միայն տարրական ուսումնարաններում: Նոցա նպատակը չէ որոշել մարդուն մի որ և իցէ կեանքի ասպարէզ, ինչպէս մասնագիտական (спеціальный) առարկաներինը: Նոքա չեն մի լոկ սանդուխք այս և այն պաշտօնին հասնելու համար, ինչպէս առհասարակ կարծում են մեզանում: Նոցա առաջին նպատակն է զարդացնել մարդու միտքը: Նոցա մէջ աւանդուած առարկաների և մանրամասնութիւնները, որպիսի են թուերը անունները, տեղերը և այլն կարող են անհետանալ ուսանողի մտքից, բայց կայ մի բան, որ մնում է նորա անդառնալի սեպհականութիւն: Այդ մի բանը նորա զարդացումն է:

Գ.

Մեր ուսումնարաններում թէպէտ առհասարակ ընդունուած են այն առարկաները, որոնք ամենայն տեղ համարվում անհրաժեշտ ընդհանրապէս զարդացման համար, բայց մոռացուած է մի առարկայ, որ ուղղակի, ամենակարճ ճանապարհով տանում է դէպի բուն նպատակը, այսինքն դէպ 'ի զարդացումն: Այդ անհրաժեշտ առարկան, որի վերայ մենք մինչև այժմ չէինք դարձրած արժանաւոր ուշադրութիւն,—ընթերցանութիւնն է: Ընթերցանութիւնը սահման չունի իւր համար: Նա պէտք է սկսի մարդու ամենաքնքոյշ հասակից և վերջանայ միայն մահուան անկողնի մէջ, իսկ տարրական ուսումնարաններում նա պէտք է կազմի առարկաների զարդացումը և արժանանայ ուսուցչական ժողովի առանձին ուշադրութեանը:

Դ.

Ի՞նչ էր լինում նորա բացակայութեան հետևանքը մեր ուսումնարաններում: Թշուառ ուսանողը չունենալով պայծառ դաղափար որ և իցէ բանի վերայ, բացի այն ուսումնարանական առարկաները, որոնք խառն 'ի խուռն դիզուած էին լինում նորա ղլխի մէջ, թողում էր իւր ուսումը անօգուտ թէ իւր անձի և թէ հասարակութեան համար, որովհետև եթէ նա գրիչ էր առնում իւր ձեռքը բան գրելու, իսկոյն խեղդվում էին նորա տակաւին անհաս մտքերը ճարտասանական ձևերի և ճոխ բառակուտակութեան մէջ: Եթէ ինստիկտով անգամ հասնէր նա որ և իցէ եզրակացութեան, նա չէր համարձակվում բարձրացնել իւր ձայնը, որովհետև անծանօթ էր նորան լոգիքաբար դատելու կանոնը:

Ե.

Աշակերտներին ընթերցանութեան միջոց տալը ուսումնարանի վարչութեան գործն է, իսկ դորա վերայ հսկելը—ուսուցչական ժողովի:—Ընթերցանութեան միջոց տալու համար հարկաւոր է, որ ուսումնարանը ունենայ մի կանոնաւոր գրատուն: Սորա համար չէ պահանջվում մեծամեծ ծախքեր: Եթէ վարչութիւնը տարեկան 100—150 ռուբլի նուիրէ այս նպատակի համար անշուշտ կարող է իրագործել այդ մանաւանդ, որ համարեա երբէք չեն պակասիլ նուիրատուութիւններ թէ աղգակից հեղինակների ու թարգմանիչների և թէ մասնաւոր անձանց կողմից, ինչպէս շատ տեղ տեսնուել է օրինակով: Լաւ կը լինէր, որ այդ գրքերը լինէին աղգային լեզվով. բայց որովհետև մեր գրականութիւնը շատ աղքատ է տակաւին, ուստի և պէտք է դիմենք դէպ 'ի եւրոպական մատենադարանին, իսկ եթէ այդ անհնար է, նոցա ռուսական թարգմանութեանը:*)

Զ.

Ուսուցչական ժողովի հսկողութիւնը պէտք է կայանայ աշակերտի հասակին և զարդացման աստիճանին յարմար գրքերի ընտրողութեան մէջ: Ուսուցիչը պէտք է հաշիւ պահանջէ աշակերտից կարդացած գրքի մասին բերանացի և գրաւոր կերպով: Այնպէս շատ օգտակար կը լինի, եթէ կիւրակի կամ տօն օրերում աշակերտներից մինը կը կարդայ իւր շարադրութիւնը և կ'աշխատի այն պաշտպանել միւսների յայտնած կարծիքների կամ հերքումների դէմ: Այդ կերպով կը զարդանայ նոցա մէջ կանոնաւոր մտածելու և միտք արտայայտելու կարողութիւնը, որից տարաբայդաբար զուրկ էին լինում առհասարակ մեր աշակերտները: Թող կորած չը համարուին ընթերցանութեան վերայ գործ դրած ժամերը, որովհետև եթէ միւս առարկաները հարկաւոր են, ընթերցանութիւնը անհրաժեշտ է աշակերտի զարդացման համար:

Ն. Լ.

ՆԱՄԱԿ ՆՈՐԲԱՑԱԶԷԴԻՑ

Այստեղ սաստիկ չոր է: Չորս ամիս է, որ Բայազդցին (Քաւառեցին) անձրև չի տեսել: Առաջուց ժողովուրդը մեծ տխրութեան մէջ էր, նայելով իրան այրված արտերին, բայց այժմ—ուրախ է որովհետև ցորենի հասկերը անցեալ տարվանից լիքն են և լաւ. միայն ինչպէս երևում է խոտը խիստ սակաւ է, դորա սէլը հիմա չորս մանէթ ու կիսով, դժուար է ճարվում: Քաւառեցիք աննախանձելի կեանք են վարում, բնակվումն քարած խրճիթներում (օդէքում), սորա առաջին դիզած է կոնոսանման բաստէն, որը դործ են ածում փայտի տեղ, ինչպէս վառելիք:

Նահապետական յատկութիւնները թագաւորում են նոցա կենցաղավարութեան ամէն մի երևոյթների վերայ... Այստեղ տգիտութիւնը և մնապաչտութիւնը հասնում է իրան maximum'ին: Միայն լաւ ուսումնարաններ և բարոյապէս կրթուած վարժապետներ կարող էին դրանց հանել խաւար նախապաշարմունքներից և ցոյց տալ ուղիղ ճանապարհ դէպի լուսաւորութիւնը: „Մշակ" լրագրի վերջին համարումը կարդացի մի սխալ լուր նոր Բայազէդու չորութեան մասին: Այդ գրողը երևի „լսէլա զանգի ձայն, բայց չի գիդա ուր է այն" Ահա բացադրեմ Ձեզ, այդ գործի եղելութիւնը: Երևանից պ. Խուդաբախշեանը գալիս է այստեղ, ցորեն հաւաքելու, որ ուղարկի Թէյրան ուր ինչպէս յայտնի է սաստիկ սովէր: Այդպէս և կատարում է: Բայց ինքը մնալով Քաւառումը մի ժամանակ, կամենում է մի մատուռ կանգնել 'ի յիշատակ իր բարեկամ Մկրտիչ Աղա Արծրունոնն:

Մահտեսի Դաւիթ Խուդաբաղչեանը, ստանալով հրամանաթուղթ Էջմիածնա կոնսիստորից, այստեղ բերթի գլխին (որը այժմ գերեզմանատուն է) փորել է տալի մատուռի հիմքը և ինքը շուտով գնում է Երևան մատուռի նիւթերի մասին: Չի անցկենում մի շաբաթ Մահտեսի Դաւիթը, այստեղի Հաշտարար Դատաւորից ստանում է ծանուցագիր, որում դա մեղադրվում է, ինչպէս քրէական յանցաւոր, իբր թէ դա փոխանակ մատուռի հիմք փորելու, քանդում է գերեզմանը և պ. Հաշտարար Դատաւորը դորան 6 օր բանտարկելուց յետոյ, բաց է թողնում երաշխաւոր առնելով: Այս բոլոր գործը է հետևանք մնապաչտութեան: Այն ժամանակը, երբ պ. Խուդաբաղչեանը մատուռի հիմքն էր փորել տալի, սորա թշնամիքը ժողովուրդի մէջ ձայն են դցում, թէ Մահտեսի Դաւիթը, քանդելով այն տեղը, համ դանձա դտել, համ էլ—այդ դանձի տեղը թաղելա մի մոգական թուղթ, որովհետև երեք տարով փողրաթափվեր առել և հիմա երկինքը կապելա, որ անձրև չգա, կամենալով մընացած ցորենը թանդ ծախել: Այդ լուրը շուտով տարածվում է դիւղից-դիւղ և բոլորեքեան հաւատում էին թէ երկինքը կապած, շատերը այնպէս էին կատաղած որ եթէ այն ժամանակը Մահտեսի Դաւիթը դորանց ձեռքը ընդներ, անպատճառ կը քարկոծէին: Միւս օրը նոր Բայազէդցիք դինվորված բահով քլունդով դիմում են դէպի մատուռի հիմքը և մի երկու անդամ այդտեղը փորումեն բաւականի խոր, որ մոգական թուղթը հանեն, բայց տեսնելով որ կմախքներից աւելի ոչինչ չկա, նեղացած դառնումեն իրանց տները: Մնապաչտները չեն բաւականում սորանով: Դորանց խելքը դրաւումէ, մի կախարդ կին, որը յայտնումա ժողովրդին „թէ իմալ մի երազ եմ տեսել, թէ կատարէք անպատճառ անձրև կդա": Եւ մի հինգ օրից յետոյ, այդ տգէտները կէս գիշերին, ծածուկ, գնումեն Քրդերի գերեզմանատունը և մի նոր մեռելի գլուխ կացնով կտրում, որ տանեն հաղորդակիցների մօտ: Այդ անմեղ Քրդի գլխին սպասումէին 6 այրի կին, մի նորահարս և 3 տղամարդ, չի կարելի դրիչով նկարել դորանց ուրախութիւնը, երբ դոքա տեսնում են Քրդի գլուխը: Մի բոպէից յետոյ այդ խառն խումբը ներկայացնում է մի այդպիսի ծիծաղելի տեսարան,—վեց այրի կանանցը լծում են այդ Քրդի գլխին, դրանց առաջին քայլում է նորահարսը, էշի վերայ թարս բազմած և պոչը ձեռին բռնած, աջ ու ձախ կողմից-զինուորված մարդիկ և այդ բոլորին մտրակով քշում է մի ալեոր մարդ: Դոքա դալով, հաչալով, մռալով և անսովոր ձայներով դիմում են դէպի Քաւառչայը վար անելու: Երբ աւարտում են վարելը, յետոյ դոքա այդ գետումը լոդացնումեն հարսին և էշին և կատարելով այդ բոլորը, դիմումեն դէպի գերեզմանատունը և փառաւորապէս թաղումեն այդ խեղճ Քրդի գլուխը պ. Խուդաբաշեանի փորած տեղը... Եւ այսպէս վերջանում է այս մնապաչտ տեսարանը, որը արժանի էր երևելի նկարչի դրչին: Ահա Ձեզ էս երկրորդ օրինակ մնապաչտութեան և տգիտութեան, որից կարող ենք քննել թէ մտաւոր ո՞ր աստիճանի մէջ է նոր Բայազդու ժողովուրդը...:

Այժմ ասենք մի քանի խօսք Քրդերի կռուի մասին, որը պատահեց էս քանի օրը: Նորբայազդու նահանգումը, սկսած Գիւմնէյի մահալից մինչի Աղդաղա սարը, դառել է ամարանոց Քրդերի և Թուրքերի, որոնք դալիս են այստեղ Էջմիածնա և Նախիջևանու նահանգներից:

Այդ արօտատեղերից աւելի նշանաւոր է Այրիջա դաշտը, (Այրի-չա-ծուռը դեա, որը անց է կենում այդ դաշտովը): Ամառը այդտեղ սաստիկ հով է, մօտիկ ձիւնապատ սարերի պատճառաւ, դաշտը լի է հիւթեղէն դալար խոտերով, ծաղկներով, նմանապէս զանազան հանքային ջրերով և սառն աղբիւրներով. Այդ դաշտը սկսվում է Աբդուլ-Հասար լեառնի ստորոտից, բարձրանում է մինչի Աղբուլաղա ոտները մի կողմից և ծռվելով դէպի Հիւսիսը—Կղլխարաբի սարերը: Այդ դաշտումը թափառումեն խաչնարած Թուրքերը, լեռների կուրծքին վերեն ասլի իրանց ալաչխները (կիսաբաց վրաններ): Քրդերը վայրենութիւնից դեռ չեն դուրս եկել: Դոքա վարումեն հովուական կեանք: Քրդի լեզուն շատ նման է Պարսկերէնին և չունենալով սեպհական դրականութիւն գործ են ածում Պարսից տառերը: Քուրդը մի քայլ չի անի, առանց թրի կամ հրացանի:

Նա քաջասիրտ է, անկեղծ է, չունի Թուրքի կեղծաւորութիւն, երբեմն նա դուռդ է և փառասէր, աւելի շատ արեան վրէժխնդիր է: Վրէժխնդրութիւնը ինչպէս Քրդերի, նմանապէս և Թուրքերի մէջ դառել է օրէնք, կամ պէտք է վրէժը հանի, կամ մեծ գումար առնէ արեան փոխարէն: Քուրդը-ընտանեկան կեանքի մէջ-հիւրասէր է և դորանց կանայքը աւելի ազատ են ստրկական կեանքից: Այստեղի Քրդերը բաժանվումեն մի քանի ցեղեր զանազան անուամբ ինչպէս, Բուրուքի, Բանիքի, Թադիքի Ջալալի և այլն: Այդ ցեղերը իրար հետ թշնամի են: Մեծ թշնամութիւն կայ այժմ Բուրուքեցոնց և Թադիքցոնց մէջ և այս թշնամութիւն էր պատճառ այն ծանր գրական գործին, որը հիմա դատաստանական քննիչի մօտ է: Ահա գործի ընթացքը: Գեղարդավանքից քսան մղոն հեռու, փոքր Աղդաղա սարերի մէջ, կա մի փոքր լիճ Ղանլի-Գեօլ" անվամբ: Այդ լճի մի կողմը թափառումեն Բուրուքեցիք, միւս կողմը-Թադիքեցիք: Մի օր դրանց հովիւները կռվում են իրար հետ, չի անցկենում կէս ժամ, Քրդերը զինուորված երկու կողմիցն էլ դուրս են թափում իրանց ալաչխներից և սկսվում է արիւնահեղ կռիւը: Երկու կողմիցն էլ զնտակներով վիրաւորվածները շատ են, միայն երկու մարդ սպանվել: Այդ ժամանակը Երևանու նահանգապետը Գենէրալ Կարմալինը, լինելով Նորբայազդումը, էն բոպէին հրամայում է Քաղաքապետի Օգնականին գնալ խաղաղացնել Քրդերին և ոստիկանութեան ծանուցումն ուղարկել Քննիչին:

*) Պէտք է նկատել, որ մեր ուսումնարանների աշակերտները թէպէտ ընդհանրապէս զուրկ են լինում գործնական վարժութիւնից ռուսաց լեզուի մէջ, բայց դոնէ միշտ հասնում են այն աստիճանին, որ կարողանում են բաւական պարզ հասկանալ իւրեանց կարդացածը: Երանի թէ այնքան ծանօթանային և դաղղիերէն ու գերմաներէն լեզուներին:

ինչպէս իրանք Քրդերը ասումեն, այդ թշնամութեան պատճառը Բօբօլան գիւղնա եղել, որը պատկանումէր Թաղիքցոնց, բայց այժմ տված է Բուրուքէցոնց, իրանց առաջվա գիւղի տեղ, որը այժմ 60 տարով մի երևելի նշանաւոր անձն փոքրաթիւ վեր առել և կամենումէ հողագործութեամբ պարապել։

Քրդերը զարմանումեն թէ ինչ պատճառաւ առանց իրանց համաձայնութեան գիւղը խլեցին նոցանից և մօտ 1000 տուն դժբաղդ դրութեան մէջ է։

Վ. Լաֆայեան։

ՆԱՄԱԿ ԱԳՈՒԼԻՍԻՑ

Բ.

Ագուլիսում վաճառականութիւնը ու հարստութիւնը Հայերի ձեռին են։ Նոցա մեծ մասը վաճառական է, կան և արհեստաւորներ. դերձիկ, ոսկերիչ, կօշկակար և այլն։ Առուտուր են անում Թիֆլիզում, Մոսկուայում, Կ. Պօլսում և այլն և գլխաւոր առարկաները վաճառականութեան սը-բանք են. թել, բամբակ, բուրթ և չիթ։ Այս առարկաները մեծ մասամբ օտար քաղաքներում առնումեն և օտար քաղաքներում էլ ծախում, օրինակի համար. Նուխիում թել են առնում ուղարկում Մոսկուա, Կ. Պօլիս և այլն։ Երևանում առնումեն բամբակ, բուրդ՝ ուղարկում Թիֆլիզ, Մոսկուա և այլն։ Ագուլեցի վաճառականների մեծ մասը, մասնաւանդ միջին կարգի ժողովուրդը, Նուխիումեն առուտուր անում և գրեթէ իւրաքանչիւրը ունի մի կամ աւելի կրպակ, որոնց մէջ գլխաւորապէս չիթ են ծախում, որ առնելով Դավրէժ քաղաքից տանում են Նուխի Լեկզիների վրայ ծախելու համար, որոնք ամառը ծագուելուն պէս՝ սկըսում են գալ այդ տեղ, և ցուրտը սկսելիս՝ հեռանալ իրանց հայրենիքը՝ Դաղստան։

Վ. Ագուլիսում կայ մի Շինական Դատարան, երեք դատաւոր ու մի Մելիք։ Դատաւորները ու Մելիքը ընտրվում են ժողովրդից քուէարկութեամբ՝ Նորին Մեծութեան համաձայնութեամբ։ Մեծ ինդիրներ պատահած ժամանակ Ագուլեցիք դիմումեն Օրտուբատու կամ Երևանու դատարանին։

Վ. Ագուլիսը ունի մի փոքրիկ, բայց գեղեցիկ շուկայ, որ ունի մօտ 100 կրպակ, որտեղ ծախվում են ժողովրդի տնային այլ և այլ պիտոյքները։ Այս կրպակներից շատերը ու լաւերը Հայերի ձեռին են։

Ագուլեցոց ասումեն „զուկ", իսկ բարբառը „զոկերէն"։ Նոցա Պարսից ու Թուրքաց իշխանութեանց տակ երկար մնալուց, այնպէս աղալաղուեցաւ լեզուն, որ, ամանչում ենք ասել, դժուարահաս է եղել ոչ միայն այլազգիների, այլ և նոյն իսկ Հայերի համար։ Ուրեմն հասկանալի է, որ նոքա էլ փոխադարձաբար չեն կարող սրանց հասկանալ (խօսքս այն անձանց վրայ չէ, որոնք անդադար հաղորդակցութիւն ունենալով և օտար քաղաքացի Հայերի հետ կամ ուսում առնելով բաւական լաւ խօսում են)։ Ագուլեցիք և մի քանի չոջակայ գիւղերի հայ բնակիչներ. Հանդամջեցիք, Գաղնեցիք. Դիսարցիք, Քաղքնեցիք, և ուրիշները իրար հետ խօսում են զոկերէն, իսկ նամակները և հաշիւները գրում են Հայերէն գրաբար լեզուով *)։

Այնտեղ հասարակական կեանք չկայ։ Կանայք աշխատասէր, համբերող մաքրասէր են, նոքա առանց հսկողութեան թոյլ չեն տալիս խոհարարին մի կերակուր պատրաստել, անպատճառ պիտի տեսնեն կամ նաև, շատ անգամ իրանք եփեն։ Ագուլիսում դեռ չէ թաղաւորում միակերպութիւն։ Այնտեղ դուք կը տեսնէք կանայք հագած իրանց հին ձևի հագուստը, որ հետևեալ մասներից է բաղկացած։ Հագնում են երկար շապիկ, որ լինում է կարմիր կամ դեղին գոյնի. դեղին շապիկը հագնում են նորահարսները. վրայից մի կապայ՝ գօտեորուած լայն ու երկար գօտիով։ Վզին ու գլխին կապում են մի քանի գոյնզգոյն մետաքսէ աղլուխներ։ Ձակատին կապում են գուլաբաթունով հանած (вышитый голубомъ) հաստ ճակատանոց, որից կախ են ընկած գեղեցիկ չինած ոսկու կամ արծաթի երկայնաձև կտորներ։ Գլխից կախ են կնջիկը (тюля), որ հասնում է մինչև քիթը. սը-գաւորի տուն գնացած ժամանակ, նոյնպէս և որբեւայրիքը, վեր են առնում։ Նորահարսները ամենևին չեն կապում։ Երեսի երկարութեամբ, երկու կողմից ձգվում են արծաթէ նախշուն գնտակներով շարած թել, որ կոչվում է հրսանուց (հարսանոց). սորա վրայ է ամրանում և ոսկէ կամ արծաթէ չանգելը, որ անցնում է վերևի աղլուխների վրայով։ Կուրծքները ծածկում են քառանկիւնի կարած մետաքսէ կամ բամբակէ գոր-

*) Ցոյս ունեմ հետևեալ անգամին մի կարճառօտ զոկերէն նամակ գրել։

ծուածքով, կոչվում է մանդիլ։ Ցանից դուրս եկած ժամանակ կանայք ծածկվում են չարսաւով՝ սպիտակ ծածկոցով։ Կը տեսնէք նոյնպէս կանայք՝ հագած Ցիխիսաւ կանանց ձևի։ Վերջինները թիւը աճում է, իսկ առաջիններինը՝ նուազում։

Ագուլեցիք ջերմեռանդ են դէպի եկեղեցին։ Նոքա ուխտ են գնում հեռաւոր տեղեր. Ս. Սթեփանոս Նախավկայ, Ս. Կարապետ, Աստրակունիս գիւղումն է, Ս. Յովհաննէս (Նուխիում), որ Կարճառն գիւղի մօտ է, ոչ շատ հեռու Սեղրի գիւղից, Երասխի մօտ, Ս. Խաչ-Քաղաքիկ գիւղում և այլն։ Վ. Ագուլիսը ունի 11 եկեղեցի, իսկ Ներքինը՝ 3։ Առաջինի եկեղեցիներից միմիայն 5 են փոքր ինչ մեծ ու գեղեցկաչէն և ունեն մի մի քահանայ։ Այդ եկեղեցիներից իւրաքանչիւրը կամ Ագուլիսում կամ մերձակայ գիւղերում ունեն իրանց պատկանեալ տեղերը (վանքը։)։

Ագուլիսում քիչ կան ուսեալ մարդիկ. բայց այնուամենայնիւ չէ կարելի չնկատել նոցա սէրը, դէպի ուսում։ Ասածիս ապացոյց կարող են լինել այն մեծամեծ ծախսերը, որ արին Վ. Ագուլեցիք 1867 թուին երկու սեռից ուսումնարան կառուցանելու համար։ Նոքա վերջի տարիներս սկսեցին իրանց որդոցը այլ և այլ քաղաքներ ուղարկել (Թիֆլիզ, Բաքու և այլն) ուսման ընթացքը ընդարձակելու համար։ — Տեղայոց ուսումնարանը գտնվում է Ս. Թովմայ Առաքելու վանքի սրահումը, ունի մօտ 80 աշակերտ, բոլորն էլ հայ։ Ունի մի մանուկ ընթերցարան, որտեղ ծախվում են զանազան դասագրքեր ու ընթերցանութեան գրքեր։ Այստեղ է լինում և հոգաբարձուց ժողովը։ Առարկաները սոքա են. ա) Կրօն, բ) Հայոց լեզու, գ) Ռուսաց լեզու, դ) Ֆրանսերէն, ե) Հայոց պատմութիւն, զ) Թուաբանութիւն, է) Աշխարհագրութիւն, ը) Բնական պատմութիւն, թ) Վայելչագրութիւն և ժ) Գծագրութիւն։

Օրիորդաց ուսումնարանը գտնվում է Ս. Քրիստափոր եկեղեցու բակումը. ունի մօտ 50 հայ աշակերտուհի։ Ուսանելի առարկայքը մի և նոյն են ինչ որ տղայոց ուսումնարանումը, զանազանութիւնը նորանումն է միայն, որ աշակերտուհեաց ուսումնարանում գծագրութեան տեղ ձեռագործութիւն է։ Ուսումնարանումս կայ մի վարժապետուհի, այն էլ ռուս։

Վերջին Ագուլեաց Հայոց Հոգևոր Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանները ունեն վեց ուսուցչի։ Ուսուցիչներից ամենաչատ վարձքը ստանում է Ռուսաց լեզուի, բնական պատմութեան և աշխարհագրութեան ուսուցիչը (800 ռ.)։

Ստեփանոս Յովհ. Սաֆրազեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսաստանի Գրոդնո քաղաքում յայտնվեցաւ խօլերան։

—

Գանձակից գրում են մեզ. Յուլիսի 3-ին սկսաւ հարցաքննութիւն նորակառոյց հոյակապ դպրոցի դահլիճի մէջ ի ներկայութեան թէ եկեղեցական թէ աշխարհական մեծ բազմութեան, որ տևեց մինչև նոյն ամսի 21-ը։ Ուսման առարկաներ են. կրօն, հայերէն, ռուսերէն, ֆրանսիարէն, թուաբանութիւն, ընդհանուր պատմութիւն, աշխարհագրութիւն, ազգային պատմութիւն և աշխարհագրութիւն հին և նոր Հայաստանի։ Դըպրոցը բաղկացած է մէկ նախակրթարանից և երեք դասատնից, այս տարի բացվեցաւ և չորրորդը։ Աշակերտները հայերէն լեզուի ազգային պատմութեան մէջ, արդարև սքանչելի առաջադիմութիւն ցոյց տուին։

—

Ախալցխայից տալիս են մեզ յետագայ հետաքրքիր տեղեկութիւնները։ Ախալցխայում կան հետևեալ ազգային ուսումնարանները 1. Կարապետեան հոգևոր ուսումնարան, 2. Եղիսաբեթեան օրիորդաց, 3. Վարդանեան ծխական, 4. Ռափաելեան օրիորդաց, 5. Մեծատունեան ծխական, 6. Ս. Ստեփանեան ծխական։

—

Լսում ենք որ Զմչկեանի և Ամերիկեանի խումբը պատրաստութիւն է տեսնում մէկ քանի շարունակ հայ-վրացերէն ներկայացումներ տալ ձմեռային թատրոնում և որ հայկական ըէպէրտուարը կազմվում է մէկ քանի ազգային պատմական պիեսներից և պ. Գ. Սունդուկեանցի կոմէդիանեպիեսներից։ Ասում են կը պարգևէ շուտով Թիֆլիզի հայ-հասարակութեանը մէկ նոր պիեսայ, այդ պիեսան ասում են մշակում է տաղանդաւոր հեղինակը ամբողջ երկու տարուայ միջոցում։ Ի բոլոր սրտէ յաջողութիւն ենք ցանկանում մեր յարգոյ թատրոնական գեղարուեստասերների խմբին։

Ցանկալի է որ թատրոնական ներկայ վարչութիւնը (պ. Նաղլէր) հասկանայ այն բոլոր դժուարութիւնները որ կրում է մեր սիրողների խումբը հայերէն ներկայացում տալու ժամանակ, հասկանայ որ նոցա աշխատանքը երբէք չէ վարձատրվում այլ ամեն հայ ներկայացումը աջողվում է միայն անթիւ զոհաբերութիւնների միջոցով,—ցանկալի է որ մեր սիրողներից պահանջվի աւելի ձեռնտու դրամական պայմանները, քան թէ մինչև այժմ պահանջվում էր։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

—

Ատրպատական նահանգի ժողովուրդը բոլորովին հաստատուել է այն կարծեաց մէջ, թէ իւրեանց մեղաց պատճառաւ երկնառաք պատիժը, որք միմեանց կը փոխանակեն, իւրեանց ամբարշտութեանց արդար հատուցումն է։ Երկիւղը այնպէս տիրել է ռամիկ ժողովրդեան վերայ, որ նա կարծում է, թէ այս ամէնը նշան են աշխարհի մօտաւոր վախճանին։ Երկնքի երևոյթները, նորան զօրաւոր փաստ են դառնում հաստատելու իւր կարծիքը։ Որպէս անցեալները հիւսիսայգը երևեցած ժամանակ, ռամիկ ամբոխը, ելանելով տանեաց վերայ, աղաղակելով առ Աստուած, խփում էր պղինձ, զարկում էր փայտ, և լացում էր, մինչդեռ հասկացողը այդ երևոյթի բնական պատճառը ծիծաղում էր նոցա յիմարութեան վերայ, թէև հասկացողների թիւը դժբաղդաբար խիստ սակաւ է։ Դադարեց սովը, անհետացաւ մահացու ժանդատենդը, իջաւ հացի գինը, բայց չը նուազեց աղքատաց թիւը, քանզի ժողովրդի նիւթական ուժը բոլորովին սպառուել է։ Բայց ահա մի նոր արհաւիրք. որոյ աղետալի հետևանքը դեռ յայտ չէ եղած։ Հինգշաբաթ գիշեր, 24 օգոստոսի, 5 բոպէ մնացած կէս գիշերուան, մի սաստիկ, արտաքոյ կարգի, դեռնաշարժ եղաւ. թէև այնքան վնաս չէ գործած, բայց գործածն էլ յայտնի չէ, ի հարկէ այս քանի օրերս կը յայտնուի։ Մի քանի անձինք կը հաստատեն թէ նախ քան երկրաշարժը երևցել էր երկնքում մի հրեղէն գունդ, որ մի քիչ ժամանակ մնալէն զկնի կտոր կտոր թափուել է երկրի վերայ. ժողովրդի մնապաշտութիւնը առիթ ունեցաւ կարծելոյ, թէ վերջին երևոյթը այն անմեղ սպանութեան մասին, Աստուծոյ բարկութեան նշանն էր զոր մի քանի օր առաջ տեղիք ունեցաւ։ Ահա եղելութիւնը։

Տեղւոյս բնակիչ մի պարսիկ մօտերս ամուսնանանում է մի մանկահասակ կնոջ հետ և նա երեսից ձգում է իւր առաջին կինը, որից ունէր մի վեցտասանամեայ աղջայ։ Առաջին կնոջ մէջ յղանում է նախանձ։ Նախանձը փոխվում է ատելութիւն, ատելութիւնն—ոճրագործութիւն։

Մի օր, երբ ամուսինը բացակայ է գտանվում, անգութ կինը իւր որդւոյ հետ գնում են մանկահասակ կնոջ տունը (ըստ որում ամուսինը առանձին տուն էր տուել նորան)։ Մայր և որդի միասին խեղդում են նորան և նորա աղախնոյն։ Եւ որպէս զի կարծել տան, թէ աղախինն է սպանել իւր տերուհոյն և տան բոլոր զարդը տարել, ձգում են խեղճ աղախնոյն ջրի հորը, ու տան զարդը վեր առնելով, տանում են և իւրեանց ներքնատեսնեակներից մինի մէջ թաղցնում են։

Բարեկամները դիմելով խեղդուած կնոջ տունը, տեսնում են նորան մեռած սենեկի մէջ. փնտրում են աղախինը, և չը գտանելով, ամենեքեան կարծում են, թէ աղախինն է սպանողը։ Սակայն մի քանիսը յայտնում են իւրեանց կարծիքը, թէ աղախինը, եթէ տնից դուրս եկած լինէր և տան զարդը տարած լինէր, ի հարկէ դրացիք, կամ այլք կը տեսնէին, մի գուցէ ուրիշը գործելով այս սպանութիւնը, աղախնոյն էլ խեղդած և ձգած լինի այս հորը։ Ի վերջոյ աղախինն հանում են հորից ու տան զարդը խուզարկելով գտանումեն անգութ կնոջ տան մէջ։

Երկար չարչարելուց յետոյ աղան խոստովանվում է, թէ իւր մօր յորդորանքով է գործել այդ մեղքը։ Ուստի չարեաթի օրէնքը վճռում է գլխատել որդին, որ և եղև իսկ, ու մօրը զահավիժել քաղաքի աշտարակից ցած։ Հարկաւ այս քանի օրերս կինն էլ կստանայ իւր իրաւացի պատիժը։ Պարսկաց սովորութիւնն է գահավիժել կանայքը, որք արժանի կը լինեն դլխատման։

Ցուրախութիւն համազգեաց կը ծանուցանեմ որ մօտերս հաստատուեց Խոյում տեղւոյս Առաջնորդի հոգատարութեամբ մի վարժարան, որոյ ուսուցիչը սպասվում է Վանից։

Մարաղա քաղաքում գնացել էին 3 ամիս առաջ ամերիկացի միսիոնէրը ու այնտեղի ժողովրդից մի քանիսին դայթակղացրել էին։ Այնտեղի քահանան գրել էր Թաբրիզու Առաջնորդաբանը, թէ մի քանի տունք կերել են իւրեանց մեծ պասը. ինչ կը հրամայէք առնել նոցա, և իսմինուում են այլոց էլ որսալ դէպ իւրեանց կրօնը։ Միսիոնարք բաշխում են ձրիաբար գրեանք, ուսուցանում են վարժատան մէջ նոյնպէս ձրի։ Սրբազանը լսելով այս աճապարեց գրել յորդորական թուղթ Մարաղեցւոց, յայտնելով նոցա խաբէութիւնը և այլն։

Բաց ի սմանէ, գրեց տեղոյս կառավարիչ Սահակ-դիւանին տալ մի յանձնարարական թուղթ Արժ. Երեմեան Յովհաննէս վարդապետին, փութով յուղարկել նորան Մարաղայ, դարձուցանել քարոզութեամբ և խրատաբ յիշեալ երեք տունը, որպէս զի չաւելանայ հետ զհետէ նոցա թիւը։ Յիշեալ վարդապետը պէտք է տանէ իւր հետ մի հայկական վարժապետ, որոյ մասին Մարաղայի քահանայն խնդրել է։ Գրած էի Զեզ նոյնպէս մի միսիոնարի թաբրիզ դալը. նա գնացել է այժմ Թէհրան, առնել հրաման թաղաւորից, այստեղ մնալու համար։

Գահաժառանգ իշխան Մուզէֆէր-ըդդին սաստիկ տաքութեանց առթիւ, որ ենթակայ է Դաւրէժ, դուրս է գնացել քաղաքից։ Նորին Բարձրութիւնը այժմ հայր է երկու զաւակաց, թէև դոցա մինի մայրը զոհ եղաւ իւր մանկան, որոյ պատճառաւ մի քանի օր քաղաքը սուգ զգեցաւ։ Իշխանը,—որ մինչ այսօր բաց ի իւր լեզուից ուրիշ լեզու չգիտէր (ըստ որում Մոլլապաշին թոյլ չէր տալիս օտար լեզուներ սովորելն երկնչելով մի գուցէ նորա մէջ ծագէ անհաւատութիւն)—սկըսել է այժմ հրամանաւ Շահին, սովորել Գաղղիերէն լեզուն, ուսուցիչն է Թադէոս խան հայազն երիտասարդը, որ էր նախկին ուսուցիչ Պէհման-Միրզա իշխանի որդւոց։

Առևտրական հանդամանքը վատ դրութեան մէջ են. չուկայի այժմեան գնացական դրամն է ռուսաց ապասին (20 կոպէկանոց), պարսկաց նախկին արծաթի զրանը հաղուագիւտ լինելով։ Ուտելեաց զինը գոհութիւն Աստուծոյ իջած է. հացի լիտրն է 4 ապասի սև փող (ամեն 3 ու կէս ապասին ռուսաց 20 կոպէկն է) միսը 6 ապասի. եղը 9 զրան։ Պտուղը առատ է։ Ժանդատենդը դադարել է բոլորովին։

Պարսկական զրականութիւնը հետ զհետէ ծաղկում է։ Նոցա „Իրան" Թէհրանի լրագիրը, որոյ խմբագիրն է Սանկ-Տօվլէ, կարէ լինել մեզ ապացոյց, որոյ մէջ զրվում են նաև եւրոպական քաղաքական տեսութիւն։ Պապի անսխալականութիւնը (մէսսմի) մինչև անդամ եղև նոցա ծաղու նշաւակ։

Մենք կը գրեմք շուտով ձեզ Պարսկաց Տէրութեան մասին։

Համ. Առաքելեանց

ՆԱՄԱԿ ԴՐԷԶԴԷՆԻՑ

Եւրոպայի ոչ մէկ մասը այնքան թանգարաններ չունի, որքան Գերմանիան, որոյ մէջ առաջին տեղը կբռնէ Դրէզդէնինը։

Այս թանգարանը որն զանազան մասերից կըբաղկանայ ինչպէս, պատմական ֆիզիքօ-մատեմատիկական, երկրաբանական, ճարտարաբանական և այլն լուսաւորեալ աշխարհի ուշադրութիւնը գրաւած է։ Տարեկան հազարաւոր մարդիք զայն տեսնելու կուգան, ուր արդարև ոչ միայն քչէ շատ հասկացողը, այլ նաև մտաւորական կոչմանէ աղքատ մարդը իւր մտաց համար մնունդ կգտնէ։ Հարկ չկայ ասելու, որ թանգարան մը կմշակէ մարդուս միտքն. ժողովրդի վերայ մեծ ազդեցութիւն ունենալով նորա բարոյականութիւնը կզարգացունէ և կսովորեցունէ գնահատել արհեստը ընդհանրապէս։ Այս նշանակութեանը Դրէզդենի թանգարանը ըստ ամենայնի կհամապատասխանէ, վասն զի քառասուն տարի է ի վեր նորա մուտքն ժողովրդի համար ձրի է, բացի շաբաթական երկու երեք օրից։ Դրէզդէնի թանգարանէն աւելի ուշադրութեան արժանի է այն մասը որն պատկերներ կպարունակէ, մանաւանդ խաչական, հոլլանդական և հին գերմանական վարպետներու պատկերները։ Ընդ ամէնը թանգարանը ունի 2356 պատկեր, որոյ մէջ կայ պատկեր մը որուն անունը համայն տարածուած է և կարելի է ասել, որ աշխարհս մէջ մէկ հատիկ է։ Այս է անմահ Ռաֆաելի Մադոննա դի Սան Սիստօ (Madonna di San Sisto) անունով պատկերը, որն 1753-ին Սաղսոնիայի Օդոստոս III թագաւորը համարեա 70 հազար մանեթով գնած է. մինչև անդամ ասումեն որ Նաբոլէօն I-ը 500,000 ռուպլիով գնել ուզած է։

Այս պատկերի հետ ծանօթացունելէ առաջ՝ Ռաֆայելի կենաց վերաբերեալ քանիմը խօսք ասել հարկաւոր կը համարեմ։ Յիշեալը 1483 Իտալիա Ուրպինօ կոչուած փոքր քաղաքում ծնեցաւ և

1520 Հռոմում մեռաւ։ Մինչ 1504 թուականը Հռոմ իւր նկարչութեան արհեստն առաջ տանելէ ետոյ Ֆլօռենցիա գնաց ուր այդ ժամանակ նկարչութիւնը ծաղկեալ դրութեան մէջ էր։ Այնտեղ Ֆրա Բառդօլօմմէօ (Fra Bartolommeo) անունով անվանի նկարիչի հոգացողութեան տակ զարգացեալով 1508 Հռօմ վերադարձաւ· որտեղ Իւլիոս երկրորդ (Iulius II) և տրա մահվանից յետոյ Լեօ տասներրորդ պապերը հասարակական շինութիւններ հիմնել յանձնեցին, որովհետև Ռաֆաել ուրեքի էր ոչ միայն իբրև նկարիչ այլ և ճարտարապետ, որն ցոյց կուտայ Նորա Հռոմում շինած Պալացցօ Պանտօլֆինի (Palazzo Pandolfini) կուչուած հիանալի պալատն։ Նկարած պատկերներն կղանուին բոա մեծ մասին Հռոմ նաև Փարիզ, Լօնդոն, Մադրիտ, Բեռլին Դրէզդէն և այլ թանգարաններում։ Ռաֆաել իւր հանճարով նկարչութեան ասպարէզին մէջ նոր ոճ մը մտուց, բայց ափսոս որ 37 տարեկան հասակում մահն մարդկային ազգի ձեռքից խլեց Նորան...։

Խօսքս անդին պատկերին դալով, կաշխատեմ դրչի առնուլ այն խորին տպաւորութիւնը որն ինձ վերայ թողած է։ Ցիշեալը թանգարանի արևմտեան կողմը առանձին սենեակիմ մէջ է, ոսկեզոծ փառաւոր շրջանակով պատած։ Լայնութիւնը 7 և բարձրութիւնը 9½ ոտք է։ Հասարակ կանանչ վարագոյր մը հրապուրիչ տեսարան մը կներկայացունէ։ Պատկերի մէջ տեղը ամպերու վերայ կանգնած է Մարիամ Աստուածածին աջ ձեռքով Քրիստոս զրկած Նորա աջ կողմը չոգած է Նմանապէս ամպերու վերայ սուրբ Սիքդուս երկրորդ (Sixtus II) պապն, որն թագն մէկդի դրած հոգեորական Աստուածածնայ կնաէ. իսկ ձախ կողմը նաև ամպերու վերայ կէս չոգած է սուրբ Բառպառա Barbara). իւր հայածքն գարձուցած է երկու հրեշտակներու վերայ որոնք Աստուածածնայ ոտքի ներքև են և անհոգ վեր կնայեն։ Աստուածածին չորս կողմէն անթիւ հրեշտակներով պատած է, որոյ դլուխներն միայն նկարել կարելի է այն ևս մեծ դժուարութեամբ։ Մանուկս որ Մարիամ զբրկած է Աստուած է, որովհետև ոչ մէկ ժամանակ երեխամը այս կերպարանքը ունեցած չէ։ Ընդհակառակն ինքն Մարիամ կատարելագործեալ մարդկային բնութիւնմը կներկայացունէ։ Իւր որդին, աշխարհիս փրկիչը. բռնած է հանդարդ, առանց խռովութեան կամ հպարտութեան, նա գրկած չէ իբրև մայր, այլ իբրև օրիորդ, որն ոչ մէկ ժամանակ իւր սրտի մէջ սէր դէպի արական սեռն զգացած չէ։ Նորա միամիտ, ձուակերպ (овальный) դեղեցիկ երեսին և մղնագոյն աչքերու մէջ անմեղութիւն և անսահման բարութիւն կկարդացուի։ Գրկած ամուր կազմուածքով մանուկն իւր ձեռքերու մէջ չի իաղայ երեխաներու նման, այլ հանդարտ բազմած է, կարծես այս մատաղ հասակին մէջ գիտէ իւր ամենակարող ըլլալը, գիտէ նաև, որ կուգայ ժամանակ և նա կփրկէ աշխարքը։ Ռաֆաել զարմանալի վարպետութեամբ աստուածային և մարդկային յատկութիւնները այս մանուկին մէջ միացուցած է։

Աստուածածնայ և Մանուկի երկու կողմն չոգող պլն և սուրբ Բառպառա և երկու հրեշտակներն կարելի է ընդունել իբրև այլակերպեալ ամբողջ մարդկային ազգը։ Պապն արական սեռն, սուրբ Բառպառա իգական և երկու հրեշտակները մակտունք։

Մարիամ, պապն և սուրբ Բառպառա հանդուած են 16-երրորդ դարում Իտալիաում եղած կարքով։ Կկնքեմ խօսքս, Կեօրնէր (Theodor Körner) դերմանական անվանի բանաստեղծին Ռաֆաելի այս պատկերի նկատմամբ ըսած բառերով։

Lange hab' ich vor dem Bild gestanden
Mich ergriff's mit wunderbaren Siegen.
Schöne Welten sah' ich vor mir liegen,
Und ich fühlte frei mich aller Banden!—

Այս պատկերի առաջ կանգնած միջոցին այլ աշխարհ մը իմ առաջ բացուեցաւ և ես ինձ այս աշխարհի կապանքներէն բոլորովին ազատ զդացի։

9 յունիսի 1872 Վ. Մութաֆեան

Արևելեան լեզուաց մեծանուն Տօքտէօռ և Բէրլինի Համալսարանի ուսուցչապետ Մեծ. Հ. Պետերման բարեհաճած է աշխարհագրական հինգ ընտիր քարտէզներ նուէր դրկել Սրբոյ Աթոռոյս ժառանգաւորաց Վարժարանին, խոստանալով, յետ աւարտման, Կիպրոսի Նորատիպ աշխարհացոյցներն ևս դրկել։

Առ. այս հրապարակաւ մատուցանելով մեր խորին շնորհակալութիւնը հայասէր ազնիւ Տօքտէօռին, արժան կը համարիմք հրատարակել իւր առ Ս. Պատրիարքն ուղղեալ ինքնագիր նամակն, որ

քանի մի խիստ կարևոր և բանասիրաց մտադրութեան արժանի կէտեր կը պարունակէ։

Գերապայծառ և Մեծայարգոյ Տէր,

Զդերապայծառ և մեծապատիւ Տէրութիւնդ ազաչեմ յառաջ քան զամենայն ներել ինձ՝ զի մինչև ցայժմ ոչ ետու պատասխանի երկուց նամակացն, որովք Տէրութիւն Ձեր զիս պատուեաց և երանելի արար։ Մեծապէս շնորհակալու եմ զԳերապայծառութենէ Ձերմէ վասն այդոցիկ, յորոց տեսի՝ թէ ոչ ամենեին մոռացար զիս՝ և վասն զբրեանդն առաքելոց առիս, զորս ի վաղուց հետէ փափաքէի ունել և ընթեռնուլ։

Զերկու թարգմանութիւնսն Պատմութեան Միխայէլի Ասորւոյ համեմատեցից ի միասին՝ թէ ժամանակ պարապոյ գտանիցեմ, և կամիմ ճառել վնոցունց յԱրքունի Ճեմարանին։ Սակս հետաքրքրական Երկաբեայ Պանդխտութեան ի Հապէշստան՝ զոր յօրինեաց Տիմոթէոս վարդապետ, ճառեցից կամ ես ինքնին կամ մի ոմն ի բարեկամաց իմոց յօրադիրս, և ի վերայ Եկեղեցական Պատմութեան Տ. Մելքիսեդեկի վարդապետի ուսուցանել կամիմ ի Համալսարանին։ Ի բաղում ժամանակաց հետէ ցանկացայ դասախօսել ի վերայ այսր առարկայի, բայց վաղն զի զայս Պատմութիւն միայն ի կաթոլիկ հեղինակացն ծանեայ՝ ոչ ֆաբայի. և յոյժ ուրախանամ զի հուսկ յետոյ այս փափագն իմ լցեալ է յայսպիսի գիտնական առնէ։

Զարմանամ դի ցայսօր ոչ ոք ի գիտնականացն Հայոց ակնարկեաց ի նամակս կաթողիկոսին Գրիգորի Տղայ կոչեցեալ, որ կայ ի զիրսն „ալպերթ ըսչիւլթան, վիթա էրը ժէսթա Սիւլթանի Սալատինի Լիւկտ. Պա. 1732 ֆօլ. բ. 121-23“ Այս զիրք որպէս կարծեմ գտանի յԵրուսաղէմ կամ ի գրատանն հիւպատոսութեան Գերմանիոյ կամ 'ի պատրիարքարանի Լատինացւոցն կամ ևս 'ի գրատանն Ընկերութեանն Պաղեստինոյ որ ի հիւպատոսութեանն Անդղիոյ։ Այս նամակ ուղղեալ առ Սուլթանն Սալադին երևի ինձ հարազատ և յիմում արաբական ձեռագրին ևս պատմութեանն Սալադինու յիշատակի. զի որպէս Բէհա ետ տին նոյնպէս ևս հեղինակն ձեռագրին իմոյ միշտ առ Սուլթանն կայ։ Ինձ թուի թէ վասն այսորիկ ոչ գտանի յիշատակեալ ի հեղինակացն Հայոց՝ զի ի տեղիս կաթողիկոս տպեալ կայ կեայիդէօս և թաիկէօս և ևս կեակիդոս այլ յիմում ձեռագրին կայ կէաթաիկէօս։

Գերապայծառութիւնդ փափաքի դիտել քանի՞ն են գրատունք հասարակաց ի Բէրլին։ Կայ աստ թագաւորական գրատուն՝ ապա գրատուն առանձին թագաւորին՝ և հուսկ յետոյ գրատուն վասն համալսարանին։ Եթէ Գերապայծառութիւն Ձեր խորհի յղել վասն այսոցիկ մի մի օրինակ տպագրութեան Սուրբ Աթոռոյդ՝ մեծապէս շնորհակալու եղիցի կառավարութիւն մեր զՁէնջ։

Ցուսամ թէ ընկալեալ իցէ Տէրութիւն Ձեր զհինգ աշխարհագրական քարտէզս՝ զոր առաքեցի. յորժամ աւարտեալ իցէ տպագրութիւն քարտիզացն Կիպրէրտի զայսոսիկ ևս յղեցից Գերապայծառութենդ՝ վասն զի այսոքիկ լաւագոյն եղիցին քան զայլս ամենայն։

Մատուցանելով ի խորհոց սրտէ զողջոյն մեծարանացն և սիրոյ Ձերում մեծապայծառ Տէրութեան և մեծապատիւ միաբանից Սրբոյ Աթոռոյդ կամ և մնամ Ձերում Գերապայծառութեան։

Խոնարհ ծառայ
Հ. Պէտէրման
(Մանղումէի Էֆքեար)

ի Բերլին 16 յուլ. 1872

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Neue Freie Presse լրագիրը ասում է, որ Բոհէմիայի ազգային կուսակցութիւնը յոյս ունէ որ երեք կայսրների տեսակցութիւնը Բէրլինի մէջ հետևանք կունենայ որ Ավստրիան կը վերցնէ իր քաղաքականութեան միջից խիստ դերմանական ուղղութիւն և աւելի նշանակութիւն կը տայ սլավոնական տարրին։

—Գերմ. Frankfurter Beobachter ասում է որ Բէրլինի մէջ տօնած Սէդանի տարեդարձը բոլորովին չաջողվեցաւ։ Ժողովուրդը բաւական սառն էր։ Գոնէ Բէրլինում փողոցները զարդարած էին դրօշակներով իսկ հարաւային Գերմանիայի մի քանի քաղաքները մնացին բոլորովին անտարբեր։

—Correspondence Slave լրագիրը տպեց մի հրաւէրք կամաւոր նուիրատուութիւններ անել Սրբազբուրգի զրադարանին որ բաւական վնասվեցաւ դերմանական զօրքի պաշարման ժամանակ։

—Independance Belge լրագրի Փարիզի թղթակիցը ասում է որ Նորերումս Օրլէանեան կուսակցութիւնը դիմեց իշխան Բիսմարկին հարցնելով Նորան նամակով թէ ինչ աչքով կը նայէ Գերմանիայի տէրութիւնը յիշեալ կուսակցութեան ձգտողութիւնների վերա կրկին Ֆրանսիայի գահը նստել։ Այդ իմանալով նոյն բովանդակութեան նամակը ուղարկեց Բիսմարկին իր կողմից և բոնապարտիստների կուսակցութիւնը։ Իշխան Բիսմարկը երկու նամակն էլ պ. Թիէրին հասցրեց։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մի Երևանցի երիտասարդ Թիֆլիսի կլասիկական գիմնազիայի ուսանող, Սողոմոն Եղիազարեան մշակել է Քուրդերէն լեզուի քերականութիւնը։ Քուրդերը իրանց տառեր չունենալով, նա կամենումէ մտցնել հայոց տառեր, որովհետև մեր այբենարանը քուրդաց լեզուի հնչիւններին ամենից յարմար է։ Ոմանք նորան խորհուրդ են տալիս ռուսաց տառեր մտցնել։

Խորհուրդ ենք տալիս երիտասարդին ուշադրութեամբ մշակել քուրդաց քերականութիւնը և այնուհետև յանձն ենք առնում ուղարկել Բէրլին պ. Պետերմաննին։

* * *

Դարձեալ մեր քահանաների քաջագործութիւններից։ Թիֆլիսի №...եկեղեցում մի քահանայ առաւօտվայ ժամը ասելուց յետոյ դուրս է գալիս եկեղեցուց։ Այդ ժամանակ նոյն եկեղեցու միւս քահանան որ թշնամութիւն ունէր առաջինի հետ մտնումէ եկեղեցի, և իմանալով որ ժամը աւարտվել է և ժամ ասողը եղել է նորա թշնամին, որի հերթ չէր այն օրը ժամ ասելու, Նորա ջգրու հրամայում է դարձեալ մի անգամ ժամ ասել։ Այնպէս որ մի օրվայ մէջ երկու անգամ առաւօտվայ ժամ ասվեցաւ քահանաների միմեանց ջգրու։

* * *

Աստրիայի Մէրան քաղաքի օրագիրն հաղորդումէ։ Նորերս ստացաւ քաղաքացիներէն մէկն փոստայէն մի հաստ նամակ. Նա այդ նամակը բանալով գտաւ Նորա մէջ 38 տալէր թուղթ փող և մի ռամիօրէն գրած հետևեալ նամակն։ „Պատուելի Պարոն...դուք կը ներէք, որ ես ինձ ազատութիւն տվի Ձեզ դրելու և խնդրելու, որ դուք ինձ ներէք այն գողութեան մասին, որն ես 15 տարի առաջ Ձեզ մօտ ծառայելու ժամանակն արի։ Ես այդ գործքից վերջն Ամերիկայ գնացի և հիմայ ես այստեղ շատ լաւ եմ գտնվում, ես շատ եմ պարապել և հիմայ այն դրութեան մէջն եմ, որ կամենումեմ դէպի Ձեզ ունեցած պարտքս վճարել, ինչպէս որ անումեմ։ Իմ մարդուս մի լաւ բարեկամն գնումէ Գերմանիայ և հետն բերումէ Ձեզմէ վերառած փողն իւր տօկօսիքովն։ Ուրեմն ներեցէք ինձ. շատ բարեւներ ինձմէ, իմ մարդումէս և իմ 6 երեխայմէս“։—Քաղաքացին քիչ ուրախութիւն չունեցաւ, երբ նա նամակին ստորագրութիւնն կարդալով յիշեց, որ այդ գող ուղարկողն երկայն տարիներ առաջ իւր մօտ ծառայող աղախինն էր։

* * *

Ներսիսեան դպրոցի համար պատգամաւորներ ընտրելու ժամանակ մի քանիսները վրդոված էին, թէ պատգամաւորների թիւումը կային ոչ դիպլոմաւոր, ժողովրդից դուրս եկած երիտասարդները...։ Ի հարկէ սա ամօթ բան է, որ ժողովուրդը հոգալով իր ուսումնարանի մասին, ընտրում է որպէս պատգամաւոր իրանից դուրս եկած մարդկերանց և ոչ թէ գեղեցիկ շլեամանեբով ծածկած դարդակ գլխներին...։

* * *

Ֆրանսիական l'Evenement լրագիրը ասում է թէ Փարիզի տպարանատէր և հրատարակիչ պ. Պլօն դանդատելէ Նորերումս դատարանի առաջ, թէ Նապոլէօն III-ը, որ առաջ Թիւլլրիի մէջ էր բնակում, իսկ այժմ Ջէյլսհրոստում, պարտէ Նորան Իւլիուս Ցէզարի պատմութիւն անուանված գրքի տպագրութեան համար 332,299 ֆրանկ և 65 սանտիմ։ Գործը պիտի քննվի նոյեմբեր ամսին։

* * *

Моск. Вѣд. լրագրի խօսքերին նայելով, այս տարվայ օգոստոս ամսին պիտի բացվէր Կազան քաղաքում կանանց համար մանկավարժական դասերը։

* * *

Кавказъ լրագրից տեղեկանում ենք, որ Բագու քաղաքում Նորից սկսվել է հրատարակվել Бакинскій листокъ լրագիրը, բայց նոր խմբագրութեամբ։ Խմբագիրներն են պ. պ. Խիմչիէվ և Վարձելով։

* * *

Վարշավից գրումեն նոյն լրագրին որ շուտով պիտի բացվի այդ քաղաքում մի հրէական ուսումնարան ռուսերէն լեզվով։

* * *

Биржа լրագիրը ասումէ թէ Օդէսսա քաղաքում յայտնվեցաւ սուտ թղթադրամ մեծ քանակութեամբ։ Ուղարկվեցան քանի մի աստիճանաւորներ գործը քննելու համար։

ԹԻՖԼԻԶԻ ՓՕՍՏԸ։

Ռուսաստան, Արտասահման ամեն օր

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ· Քութայիս, Դարբանդ և Երևանդաւառը։

ԵՐԵՔՇԱԲԹԻ· Բագու, Գանջա. Շուշի, Շամախի

ՁՈՐԵՔՇԱԲԹԻ· Քութայիս, Երևան, Ախալցիխ Դարբանդ։

ՀԻՆԳՇԱԲԹԻ . . . .

ՈՒՐԲԱԹ· Քութայիս, Երևան, Ախալցիխ Զաքաթալ, Նուխի։

ՇԱԲԱԹ Բագու, Դարբանդ, Գանջա։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻԶԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(սեպտեմբերի 14-ին)։

ՈՍԿԻՆ, (պօլուիմպէրիալ)	6 ռ.	20 կ.
ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ (քարաթ) Պօլ.		
վճարելիք (լիրա Օսմանեան) .	6 „	70 „
ԲԱՄԲԱԿԸ Երևանու.	5 „	60 „
„ Ամերիկայի սերմից .	7 „	20 „
ԹԱՄԲԱՔՈՒ Տրապիզոնի	12—13 „	— „
ՇԱՔԱՐԸ Ռսի (Բրօցկու)	8 „	30 „
„ „ միւս տեսակը . .	8 „	20 —
„ զաղրանիցու տրանցիդ.	5 „	80 „
մաքսը վճարած	8 „	80 „
ՇԱՔԱՐԱՒԱԶԸ Ռսի.	7 „	30 —
ԲՈՒՐԴԸ թուչի	9 „	— —
„ թարեքեամի	6 „	— „
ՂԱՀՎԱ Լիվանի լաւը.	13 „	50 „
„ Մարտինիկոյի, ցածրը .	12 „	50 —
„ Մօկո, շատ լաւը . . .	14 „	70 “
ՊՂՊԵՂԸ.	11 „	50 „
ԵՐԿԱԹ.	3 „	50 „
ՄՈՄ	11 „	70 —
ԱԼԻՒՐԸ կրուպչատկայ Ռուսաստանի բէրքը փութը.	3 „	60 „
ԱԼԻՒՐԸ կրուպչատկա Ախվերդեանի տեղական ջաղացից (Գեանջայում). . . . . № 1 փութ	3 „	20 „
„ № 2 „	2 „	40 „
„ № 3 „	2 „	10 „
ԱԼԻՒՐԸ Գեանջու հասարակ . .	1 „	90 „
„ Շորագեալու	1 „	80 —

Ս· ՊԵՏԵՐԲՍԻՐԳԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ·

(սեպտեմբերի 1-ին)

ԼՕՆԴՕՆ.—մի ռուբլի ածէ 32⅝ պէնս (փոխանակ 40 պէնս)։

ՓԱՐԻԶ. — մի ռուբլի ածէ 347½ սանտիմ (փոխանակ 400 սանտիմ)։

Առաջին ներքին 5% փոխառութեան տոմսակ— երկրորդ 153½

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ПРОДАЕТСЯ Полная карманная фотографія, спросить у часоваго мастера Паліева (онъ же Бурназовъ). 1 (3)

МОЛОДОЙ ЧЕЛОВѢКЪ даетъ уроки по всѣмъ предметамъ гимназическаго курса. Адресъ въ Библіотекѣ Иванова. 2 (3)

Տարրական ուսումնարան երկու սեռի երեխաների համար մինչև 11 տարեկան հասակը և մանկական պարտէզ։

ՏԻԿԻՆ ՍԻՄՕՆՕՎԻՉԻ

Սօլոլակում, Ստարօ-Ինստիտուտսկի փողոց, պ. Սվէչնիկովի տանը։

Ուսումն սկսվումէ սեպտեմբերի 4-ին։ Տարեկան վարձը ուսումնարանում 60 ռուբլի։ Եթէ մի և նոյն ընտանիքից երթևեկութիւն կանեն ուսումնարանում երկու և երեք երեխաներ, այն ժամանակ երկրորդը վճարումէ 50 ռ. իսկ երրորդը միայն 40 ռ. տարէն։ Մանկական պարտէզում վարձը ամսական 4 ռուբլի է։ Բացի սորանից մանելով վճարվումէ 1 ռուբլի նիւթեղէններ գնելու համար։

Պայմանները կարելի է իմանալ մանրամասնաբար կառավարիչ տիկնոջ մօտ մինչև սեպտեմբերի 4-ը առաւօտեան, իսկ այնուհետև երեկոյեան ժամը 3-ից մինչև 5-ը։

3 (3)

Дозволено Цензурою. Тифлисъ, Сентября 14, 1872 г.

Տէրէթէլի և ընկ.(նախկին Դուբէլիրի) տպարան-

Խմբագիր—հրատարակող Գրիգոր Արծրունի